«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա մայրենիից

2025-2026 ուստարի

6-րդ դասարան

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա այս գրվածքը, որի հեղինակը ժամանակակից գրող

Արսեն Համբարյանն է:

Կատարի՛ր առաջադրանքները:

1. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է տրվածը: Կարծիքդ հիմնավորի՛ր (5 միավոր):

Առակ է. հեղինակը կիրառել է այլաբանություն, որպես կերպարներ ընտրել է սարը և ամպը: Առակներում մարդկանց հաճախ փոխարինում են զանազան անշունչ իրեր կամ բնության երևույթներ: Առակները խրատներ են. դրանք մարդկանց այլաբանորեն սովորեցնում են լինել բարի և մեծահոգի, հոգ տանել շրջապատի, այլ անձանց բարօրության մասին:

2. Ի՞նչ ես կարծում՝ ինչո՛ւ է հեղինակը սարին այդ անունը տվել (5 միավոր):

Եսասար է անվանել, դրանով ընդգծել է սարի եսապաշտությունը, անձնապաշտությունը: Սարը միայն իր մասին է մտածում, չի հոգում ուրիշների՝ արտերի, անտառների մասին: Իսկ վերջում էլ պատժվում է իր անգթության համար. հրաբուխ է ժայթքում, որը հենց իրեն է վնասում:

2. ԵՍ արմատով հնարավորինս շատ բառե՛ր հիշիր և գրի՛ր (10 միավոր):

Ես – եսակաև, եսասեր, եսապաշտ, եսամոլ, եսակենտրոն, եսամոլություն, եսասիրություն, եսապաշտական, եսանվեր, անեսասեր:

4.Ո՞ր բառերում են թաքնված կրակ բառի հոմանիշը, դո՛ւրս գրիր դրանք, առանձնացրո՛ւ արմատները (5 միավոր):

Հրդեհ – հր/հուր+դեհ, հրաբուխ-հր/հուր+բուխ

**5.** Ո՞ր բառերում են թաքնված շոգ բառի հականիշները, դո՛ւրս գրիր դրանք, առանձնացրո՛ւ արմատները **(5 միավոր):**

Հովացնել –հով+ացն+ել, զով+ացն+ել

**6.** Տեքստում բառեր կան, որոնք կարող ես գրել ամեն մի շարքի կողքին, դո՛ւրս գրիր դրանք համապատասխան տողում **(5 միավոր):**

Ագի, ձետ, գես----պոչ-------------------------------------------------------------

Մառախուղ, շամանդաղ, բալ ------մուժ-------------------------------------------

Կարմրատակել, ջեռանալ, կեծանալ----շիկանալ-------------------------------------

Տեղատարափ, առատաջուր, ջրառատ------լիահորդ------------------------------------

Բխել, ցայտել, արտավիժել---------------------ժայթքել-----------------------------------

**7.** Տեքստից դո՛ւրս գրիր արմատ+ա+արմատ կամ արմատ+արմատ կազմությամբ հինգ բառ, վերլուծի՛ր բառակազմորեն **(5 միավոր):**

Եռասար-եռ+ա+սար

Շուրջբոլորը–շուրջ+բոլոր/ը/

Չորսբոլորը–չորս+ շուրջ+բոլոր/ը/

Մինչդեռ-մինչ+դեռ

Հրաբուխ-հր/հուր+ա+բուխ

Լիահորդ-լի+ա+հորդ

Հրդեհ-հր/հուր+դեհ

**8.** Շարադրի՛ր քո կարծիքը, տեսակետը Եսասարը հիշեցնող մարդկանց արարքների մասին: Անպայման երկու օրինա՛կ բեր կա՛մ կյանքից, կա՛մ կարդացածդ գրքերից, կա՛մ դիտածդ կինոնկարներից **(10** միավոր**):**

Կարծիքի գնահատման սանդղակ

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 10 | 1. Գերազանցորեն շարադրել է իր կարծիքը եսասեր մարդկանց և նրանց արարքների շուրջ՝ հղում անելով նաև վերևում տրված առակին:<br>2. Բերել է երկու օրինակ և վերլուծել է դրանք:<br>3. Մտքերը տրամաբանորեն կապակցված են. դրանք շարադրված են գրագետ և հստակ:<br>4. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության սխալներ չկան: |
| 9-8 | 1. Լավ շարադրել է իր կարծիքը եսասեր մարդկանց և նրանց արարքների շուրջ՝ հղում անելով նաև վերևում տրված առակին:<br>2. Բերել է երկու օրինակ և վերլուծել է դրանք:<br>3. Մտքերը տրամաբանորեն կապակցված են. դրանք շարադրված են գրագետ և հստակ:<br>4. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 2-3 սխալ ունի: |
| 7-6 | 1. Բավարար չափով շարադրել է իր կարծիքը եսասեր մարդկանց և նրանց արարքների շուրջ՝ հղում չի անում առակին:<br>2. Բերել է երկու օրինակ, բայց դրանք չի վերլուծել:<br>3. Մտքերը տրամաբանորեն կապակցված են. դրանք շարադրված են գրագետ և հստակ:<br>4. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 4-5 սխալ ունի: |
| 5-4 | 1. Որոշ չափով շարադրել է իր կարծիքը եսասեր մարդկանց և նրանց արարքների շուրջ՝ առանց առակին անդրադառնալու:<br>2. Բերել է երկու օրինակ, բայց դրանք չի վերլուծել:<br>3. Մտքերը տրամաբանորեն կապակցված չեն. տեղ-տեղ շարադրված մտքերը չունեն հստակ ձևակերպում:<br>4. Բառապաշարը հարուստ չէ. չի կիրառում պատկերավոր արտահայտություններ:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 6-8 սխալ ունի: |
| 3-2 | 1. Փորձել է շարադրել կարծիք եսասեր մարդկանց և նրանց արարքների շուրջ՝ առանց առակին անդրադառնալու:<br>2. Օրինակներ չի բերել:<br>3. Մտքերը տրամաբանորեն կապակցված չեն. Շատ տեղերում շարադրված մտքերը չունեն հստակ ձևակերպում:<br>4. Բառապաշարն աղքատիկ է:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 9-10 սխալ ունի: |
| 1 | Շարադրանքը կարծիք չէ: |
| 0 | Կարծիք ընդհանրապես չի գրել: |